Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3458

Գ. Տեր-Մկրտչյան

Յովհան Մանդակունի

281
S-46

ԳԱԼՈՒՍՏ ՏԷՐ ՄԿՐՏՉԵԱՆ

(Արտատպութիւն «Արարատ» ամսագրից, 1903 թ. Յունիս-Սեպտեմբեր)

# ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

## I.

A—Ձ. 672 Գէորգ. ցուց. ստուար ճառընտիր կամ Վարք սրբոց, 38×26, Թուղթ, բոլորգիր, անթուական, գրիչ Նատեր, տեղին անյայտ, յիշւում են բազմաթիւ ստացողներ, իւրաքանչիւր ճառի կամ վկայաբանութեան վերջում առանձին առանձին: Ստացողները մեծ մասամբ հասարակ դասակարգից՝ արհեստաւորներ: Շատ հետաքրքրական են ստացողները պարապմունքի տեսակէտից, յիշւում են՝ ներկարար, կաշկար, բաղալ, եկեղեցպան, քահանայ, ճոն, ջուլահկ, սարկաւագ, ոսկերիչ, դանկլար, կտաւագործ, ապրեփեց, «հուսն», Թաւկիր, դերձակ, ժամակոչ, դանկագործ, գինեծախ, դարբին, էգէպան, սանդրգործ ևլն: Յիշւում են՝ Վարդերես Շիրակցի, Ստեփանոս Վանեցի և մի ուրիշը (անունը քերուած), «որ էր ի տղայութեանն յազգէն Բոծորայ և երաց Քս զաչս նորա և հայեցաւ ի Քս և հաւատաց և եղև միանձնաւոր և սբ ճրգնաւոր»: Մեզ հետաքրքրող մասը՝ էջ 671[բ] —677[ա]:

B—Ձ. 1540,$_5$, Թուղթ, նոտրագիր, անթուական, հրատարակութեանս ժամանակ չունիմ ձեռքի տակ: Այս Ձ-ից են ծագում միջապէս կամ անմիջապէս C և D Ձ-երը: B-ի վերտառութեան «արարածք» բառը գրուած

2012

281
S-46

լինելով լուսանցքում՝ բնագրի առաջին տողի հաւասարութեամբ, անուշադիր արտագրողը (C և D) այդ բառը բաց է թողել վերնագրում (=«պտղաբերին» փոխանակ «պտղաբերին արարածք») և անտեղի կերպով մտցրել է բնագրի մէջ «ի սկզբան արարածf ժամանակին» փոխանակ «ի սկզբան ժամանակին»:

C=Զ. 1539,$_2$ կաշեկազմ, թուղթ, նոտր, 21×15, գրիչ «Ղրըմցի Մարկոս վրդպտ.» գրութեան տեղն և ժամանակը անյայտ: Բարոյք կամ թուղթք Յովհաննու Մայրավանեցւոյ, որ «Յովհաննու Մանդակունւոյ» (Բ. տպ. Վենետ. 1860) անուամբ հրատարակուած ճառերն են: B-ում էլ սոյն այս ճառերը Մայրավանեցու անուամբ էին: Մինչդեռ մեր ներքևում հրատարակած հատուածը երկու Զ-երում էլ կրում է Մանդակունու անունը: C-ն ինչպէս և D-ն մեր կարծիքով ընդօրինակուած են B-ից: Մեր հրատարակութեան մէջ B-ի պակասը լրացնում են C և D: Մեզ հետաքրքրող մասը էջ $96^{ա}$—$103^{ա}$:

D=Զ. 2240,$_1$, կաշեկազմ, թուղթ, նոտր, 20×16, գրութեան տեղն և ժամանակն անյայտ: Բովանդակութեամբ յար և նման C-ին, այն է Մայրավանեցու ճառերը [=տպագրի «Մանդակունու ճառերը»] և Մանդակունու ներքևում հրատարակուող հատուածը: Զ-ըի մեզ հետաքրքրող մասը՝ էջ $97^{բ}$—$103^{ա}$,

E=Զ. 487,$_6$, կաշեկազմ, թուղթ, բոլորգիր, 21×15, գրիչ Գէորգ երէց, ստացող տէր Բարսեղ, էջ $40^{բ}$ և $176^{բ}$ կնիք, որի մէջ կարդացւում է պատուագրութեամբ և փակագրով «Բի ծառայ տէր Պաղտասար» և «1[7]46» թուականը: Բովանդակութիւնը՝ ի թիւս այլոց՝ Յովհան Մայրավանեցու ճառերը, ինչպէս BCD-ում և մեզ հետաքրքրող հատուածը Մանդակունու անուամբ, էջ $291^{ա}$—$309^{բ}$:

V=Յովհան Մանդակունու մատենագրութիւնք, երկրորդ տպագ. Վենետ. 1860, էջ 207—219:

V²=V-ի տարբեր ընթերցուածները:

T=Գիրք Թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 239 — 240, նաև վրիպակները՝ էջ 581:

K=Կանոնագիրք: Կանոնագրքից առել եմ միայն մի քանի ընթերցուածներ, օգտուելով պ. Սիրական Տիգրանեանի բաղդատութիւններից (ձեռագիր):



## ՄԱՏԵԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆՒՈՅ

### Յաղագս սիրոյ եւ սրբութեան որով պտղաբերին արարածf:

Աւրդ յառաջնում ամին և ի սկզբան ժամանակին պատուիրեալ Տեառն Աստուծոյ Ադամայ չուտել ի պտղոյ ծառոյն կենաց և մահու, որ էր ի մէջ դրախտին, և նորա լեալ անհնազանդ հրամանին Տեառն՝ կերեալ անժամ և մեռեալ տարաժամ. վասն զի չէր ժամանակ ուտելոյ և լինելոյ թողութեան յորոշել ծառոյն կենաց և մահու, յորմէ Նայն չհրամայեաց ճաշակել. քանզի ցանկութիւն կերակրոյն ծնաւ զմահ առժամայն և ճաշակ ցանկութեանն եհան զմարդն առաւրին ի դրախտէն:

1—2 A Յովհաննու Մանդակունեցւոյ Յաղագս սիրոյ և սրբութեան, յոյժ ուղղակի BCDE Մատեան Յովհաննու Մանդակունեցւոյ Յաղագս սիրոյ և որբութեան որով պտղաբերին [արարածք]: Այս «արարածք» բառը իւր տեղում ունին միայն BE-ն, իսկ CD-ի մէջ այդ բառը տեղափոխուել է և ընկել է բնագրի առաջին տողի մէջ այսպէս՝ «և ի սկզբան արարածf ժամանակին»: 1 E առաջնում CD ի սկզբան արարածք 7 D անժամանակ E յանժամ 8 C ուտելոյ 11 E չիք ճաշակ ցանկութեանն եհան CD չիք առաւրին

2012

Արդ նոյն ծառ սաբեկ յերրորդ դարուն երևեաւ հայրապետին Աբրահամու, ունելով պտուղ դառնախոյս զոր առեալ մատոյց պատարագ Տեառն Աստուծոյ ի վերայ քարաբլուր վիմին Գողգոթայի, որ է աւրինակաբեր խաչելութեանն Քրիստոսի։

Արդ նոյն ծառ, նովին պտղով, նովին պատուիրանաւ, յայտնեալ ի վերջին ժամանակս ի վեցերորդ դարուն, ի վեցերորդ աւուրն ուրբաթու, ունելով պտուղ զՔրիստոս ի վերայ ծայրից ծաղկեալ խաչին... զծառն սաբեկայ, որ ասի թողութիւն, քանզի եկն ժամանակն թողութեան ամենայն մարդոյ ի ձեռն ուտելոյ պտղոյն ծառոյն կենաց և մահու, յորմէ Ադամայն հրամայեաց չճաշակել։

Արդ յորում աւուր և յորում ժամու պտղով և պատուիրանաւ եհան զմարդն ի դրախտէն, ի նմին աւուր և ի նմին ժամու նովին պտղով և պատուիրանաւ տարաւ զմարդն ի դրախտն։ Վասն զի անժամանակ պտուղ ծառոյն կերողացն մահ, իսկ չկերողացն կեանք։ Իսկ այս ժամանակ պտուղ ծառոյն կերողացն կեանք բերէ, և չկերողացն մահ գործէ, քանզի գրեալ է զՔրիստոս քար գայթակղութեան և վէմ գլորման։ Քանզի ի սկզբան ժամանակին պատուիրէ չուտել ի դրախտին զպտուղ ծառոյն, յորմէ զմահ ճաշակիցէ, և ի փոխճանի աւուրցս աւետարանաւն հրամայէ ուտել զխաչաբեր պտուղ ծառոյն կենդանութեան, յորմէ զկեանս յաւիտենականս ժառանգիցեմք։ Քան-

13 E չիք Արդ նոյն ծառ 15 A չիք պատարագ 18 C ծառ ովին D ծառ ովինոյն 20 E յաւուրն 21 Երեք կէտը մեր դրածն է ցոյց տալու համար, որ այստեղ մենք պակաս ենք ենթադրում. Ձե-րում պակասի արտաքին ոչ մէկ նշան չկայ։ 23 E թողութեանն 24 A չիք ծառոյն E ադամեան 26 CD որում 27 A և ի նմին E չիք ի նմին աւուր և ի նմին ժամու 30 CD ծառոյն կենաց 31 ACDE Իսկ այս? ժամանակ C կերողացն կերողացն 32 A «մահն», նուն ջնջման կէտով: 34 E իսկ զբանն 36 CE ի վաղճանի C հրամայ 38 A ժառանգիցէք CE ժառանգեցէք D ժառանգիցեմք



զի ասէ, եթէ Զհնազանդութիւն կամի քան զպատարագս, և զգիտութիւն՝ քան զողջակէզս։

Արդ եթէ հնազանդեալ էր Ադամայ պատուիրանին Տեառն՝ չէր կերեալ զմահաբեր պտուղ ծառոյն, և եթէ գիտացեալ էր զթշնամութիւն մարդախոշոշ հակառակորդին, չէր արդեւք խաբեալ ի պատրողական թշնամւոյն։ Նոյն աւրինակաւ ժողովրդեանն հրէից՝ եթէ հնազանդեալ էր հրամանին Տեառն՝ կերեալ իցէր զպտուղ ծառոյն կենաց, յորմէ զկեանս գտանէին, և եթէ գիտացեալ էր զխորհուրդն աստուածային տեսչութեանն՝ չէր արդեւք խաբեալ յամենապատիր թշնամւոյն։ Քանզի գթեցին նոքա առ վիմին գայթակղութեան, վասն զի եկն ժամանակ ժողովրդեանն հրէից ուտել ի պտղոյ ծառոյն կենաց, յորմէ Ադամ կամեցաւ ճաշակել, և նոցա լեալ անհաւան հրամանին Տեառն, և չկերեալ զխաչաբեր պտուղ ծառոյն կենաց՝ զմարմինն տէրունական, և չարբեալ ի ջրոյն կենդանութեան յեդեմական աղբերէն՝ զարիւնն փրկական, որոց պասքեալ պապակեցին անձինք իւրեանց մինչև ցայսաւր ժամանակի, զորս նոցայինն Մովսէսի անիծեալ զնոսա ըստ աւրինացն, եթէ Անիծեալ լիցի ամենայն մարդ, որ ոչ կայցէ ի գիրս աւրինացս այսոցիկ։ Եւ դարձեալ մերայինն Պաւղոսի նզովեալ զնոսա ըստ շնորհացս, եթէ Որ ոչ սիրեսցէ զՏէր Յիսուս ե-

39 CDE թէ D կամիմ 40 CDE զգիտութիւն աստուծոյ 42 CD այ փոխ. ան 44 C արդեաւք DE արդեօք 45 C թշնամոյն 46 D հրամանի 48 CD զխորհուրդս 49 E ամենապատիր 52 CDE չկամեցաւ 54 ACDE «չէր կերեալ» որ ուղղում ենք «չկերեալ»: E կենսաբեր փոխ. կենաց 55 E զմարմին C չարբել ջրոյն D չարբեալ ջրոյն E չարբել ի ջրոյն 56 E յաղբերէն 57 A փափագեցին լուսանցք. պապակ CDE պապակին 58 C նոցաինն D նցինն 59 E եթէ ածեալ 60 D կացցէ E որոց կացցէ C այսոցից 61 D մերայինն E մերոյին C Պօղոսին C ն''զ նս=նզովեալ զնոսա 62 E չիք որ D քո փոխ. յս

զկցի նշմեալ մարանաթայ, մառան Տէր, արայ եկն. այսինքն Տէր եկն, և նոքա ոչ հաւատացին, որք կոչին յամենեցուն մամձիք, այսինքն խանդարեալք, զի ոչ աւրինաւքն վարեցան, և ոչ հաւատոց հնազանդեցան։

Քանզի սուրբ աւետարանն, առաքեալք և մարգարէք կոչեն երկոսս ժողովուրդս և երկուս հովիւս՝ նախ զհրէականն և ապա զհեթանոսականս. զնա՝ Մովսիսեան և զսա Քրիստոսեան. զնա Իսմայելեան, և զսա՝ Իսահակեան. զնա լեառն սինէական, և զսա քաղաք երուսաղէմական. զնա մորենին հրովն, և զսա կոյսն աստուածութեամբն. զնա տապանակն ոսկեզաւծ, և զսա կոյսն սրբութեամբ։ Ի նմա տապանակն քաւութեան տասն պատուիրանաւք, և ի սմա Քրիստոս չորիւք աւետարանաւքն։ Զնա սափոր լի մանանայիւ, և զսա կոյսն լի Հոգւովն սրբով։ Զնա գաւազանն Մովսէսի, և զսա խաչն Քրիստոսի։ Զնա ջուրն ի վիմէն, և զսա աղբիւրն աւազանին։ Զնա խորանն Մովսէսի, և զսա եկեղեցին Քրիստոսի։ Զնա ողջակէզն քաւութեան, և զսա պատարագն աւրհնութեան։ Զնա արիւն ողջակիզին քաւութեան, և զսա արիւն Քրիստոսի սրբութեան։ Զնա ծովն Կարմիր լուացման, և զսա գետն Յորդանան մկրտութեան։ Զնա թլփատութիւն, և զսա մկրտութիւն։ Զնա ի հարսանիսն ուրախութեան, և զսա փեսայն յարքայութեան։ Զնա կարապետս՝ մարգարէսն, և զսա փեսաւէրս՝ առաքեալսն։ Զնա ջուրն

63 C մարանադայ D մարանաթա D աթեայ եկն E չիք եկն 65 D ամենեցուն CD չիք ոչ 67 E չիք սուրբ A աւետարան CD աւետարանն և 69 ACD մովսէսեան 70 A Իսրայէլեան 71 E Իսահակայն A լեառնն E ի լեառն C սա 73 D ածութեանն CD տապանակ 74 C զսայ 75 CD ի սմայ 76 CD աւետարանօք C մանանաիւ 77 E չիք լի C հոգով E հոգւովն 78 ACD չիք ի (վիմէն) և 79 C սայ CD խորան 80 CDE ողջակէզք 81 D արիւնն 82 C արիւնն 84 C որդանան 85 D ի հուր սանիսն 86 CDE արքայութեան C կարապէտ D կրպտ 87 CD փեսաւէր



թաղուկացն, և զսա գինի բազմականացն։ Զնա տիկս հնացեալսն, և զսա գինին նորանշանն։ Զնա եւթն նըկանակսն, և զսա հինգ գարեղէնսն։ Զնա եւթն զամբիղսն, և զսա երկոտասան սակառսն։ Զնա էշն պառաւ, և զսա յաւանակն որմաւղ։ Զնա ժողովուրդն հայհոյիչ, և զսա մանկունն աւրհնիչ։ Զնա տաճարն փառաց, և զսա Սիովն շնորհաց։ Զնա ձիթենին ընտանի, և զսա պատուաստն վայրենի։ Զնա մերժումն, և զսա՝ ընկալումն։ Զնա Մովսէս մարգարէիւքն, և զսա Քրիստոս առաքելովքն։ Զնա աւրէնս սինէական լեռնէն, և զսա հաւատ սիոնական լեռնէն։ Զնա գործս, և զսա շնորհս։ Զնա պատուիրանս, և զսա աւետիս։ Զնա առաջին, և զսա վերջին։ Զնա հին, և զսա նոր։ Զնա երէց, և զսա կրտսեր։ Զնա ծեր, և զսա տղայ։ Զնա շաբաթ, և զսա կիւրակէ։

Որոյ են արմատքն աւրէնքն, և ոստքն մարգարէքն, և ծաղիկ առաքեալքն, և պտուղն Քրիստոս։ Քանզի գրեալ է զՔրիստոս գլուխ աւրինացն. վասն զի ասէ իսկ. Եթէ չեկի լուծանել զաւրէնս և զմարգարէս, այլ լնուլ և կատարել։ Եկի առնել զերկուս ժողովուրդս մի հաւտ և մի հովիւ. այսինքն միաբանել և միացուցանել զգործս և զհաւատս։

Արդ սոյն աւրինակ և մեծ մարգարէն Եսայի կոչէ զերկուս ժողովուրդս երկուս եղբարս—զհրէականն և զհեթանոսականս։ Նմա մարգարէանայ, և սմա աւետարանէ. Նմա քարոզէ, և սմա կարապետէ։ Նմա բողոքէ, և սմա գուշակէ. և միաբանէ զերկուս ժողո-

89 E գինի CD եօթն 90 C քարեղէնսն E զեւթն A զամբիղն C եաւթն զամբիւղն D եօթն զամբիւղսն 91 D երկոյ տասան CD էզն պառաւ 92 E որմող 95 C և զս պատուաստն D և զսա պատուաստն 97 E յօրէնս 98 CDE սիովնական 101 D էրէց 102 C զնյ=զնա ACE կիրակէ 104 E ծաղիկք 105 CD չիք գրեալ է 106 E ասէ խսկ 107 CDE երկուս 109 A մեծացուցանել փոխ. միացուցանել 111 CD հրէականն և զհեթանոսականն 114 CD երկուս

վուրդս, և միաւորէ զգործս և զհաւատս։ Զնա գործովք ծեր կոչէ, և զսա հաւատովք տղայ։ Ծերն, ասէ, տղայ կատարեսցի գործովք և հաւատովք ի Քրիստոս, և տղայն, ասէ, հարիւրամեան մեռցի հաւատովք և գործովք մկրտութեամբ։ Հրէայն, ասէ, ծերացեալ աւրինաւքն և գործովք, այլ զի և հաւատովք ի Քրիստոս տղայացեալ՝ կատարեսցի. և հեթանոսն տղայացեալ հաւատովքն և մկրտութեամբ, այլ զի և գործովք ասի ծերացեալ՝ աւրինաւքն և գործովք կատարեալ վախճանեսցի։ Քանզի հեթանոսն, ասէ, հաւատացեալ, եթէ ոչ մկրտեսցի՝ թէև հարիւրամեան մեռցի՝ անիծեալ կոչեսցի։ Նոյն աւրինակ, ասէ, և հրէայն, եթէ ոչ հաւատասցէ ի Քրիստոս և ազատեսցի յանիծից աւրինացն և ոչ թլփատեսցի և կատարեսցէ ըստ աւրինացն և մեռանիցի, անիծեալ կոչեսցի։ Տինա և հեթանոսն հաւատացեալ և մկրտեալ, եթէ ոչ գոր՝ով կատարեալ գտանիցի՝ չկարէ մտանել յարքայութիւնն, քանզի գրեալ է, Հաւատք առանց գործոց գատարկ են։

Արդ՝ եթէ մտադիւրութեամբ կամիս լսել, յաւետարանին սրբոյ գտանես զհրէայսն առանց հաւատոյ, և զհեթանոսսն առանց գործոց եղբարս հասարակս։ Արդ ասէ լուր համառաւտ բանին Տեառն, Եթէ ոչ դարձջիք և եղիջիք իբրև զմանուկս դայս՝ ոչ կարէք մտանել յարքայութիւն երկնից։ Եւ դարձեալ՝ Եթէ ոչ առաւե-

115 CDE միաբանէ փոխ. միաւորէ 116 E հաւատովքս C և զնա հաւատովքս տղայ D և զսա հաւտվ տղայ 119 A գործք A «կեցեալ» ուղղուած «ծերացեալ» 120 C գրւծովք CD այլ և զի և E այլ և 121 E տղայեալ 123 CDE չիք աւրինաւքն և գործովք CD ծերացեալ, կատար վախճանեսցի 126 CDE հաւատայցէ 127 A յաւրինացն 129 D Զի նա փոխ. տինա 131 D գտանիցին ոչ կարէն CD արքայութիւնն E յարքայութիւն 132 D գատարկք 133 CDE աւետարանին 134 CD հաւատոյ 135 ACDE զհեթանոսն A Ցախ հաւատարս յետոյ ուղղուած հասարակս: 136 D ասէ աղէ 138 CDE յերկնից 138—142 A չիք Եւ դարձեալ—մտանել յարքայութիւն երկնից: 138 E առաւեսցի յարդարութիւն



լասցի արդարութիւն ձեր քան զփարիսեցւոցն, ոչ մտանէք յարքայութիւն երկնից։ Արդ եթէ ոչ ունիցիք զանմեղութիւն հաւատոցս և զարդարութիւն օրինացն, ոչ կարէք մտանել յարքայութիւն երկնից։ Արդ զտղայն անմեղութեան հաւատս կոչէ...գործս։ Եւ դարձեալ՝ Եղերուք խորագէտք իբրև զաւձս, և միամիտք իբրև զաղաւնիս։ Զարդարութիւն և զգործս և զգիտութիւն աւրինացն խնդրէ, զանմեղութիւն և զհնազանդութիւն հաւատոցս պահանջէ։ Եւ դարձեալ երանելին Պաւղոս ասէ, Եղերուք իմաստունք ի բարիս և անմեղս ի չարիս։ Հրամայէ անմեղութեամբ տղայանալ ըստ շնորհաց, և գործովք իմաստութեան իմաստնանալ ըստ աւրինացն։

Արդ եթէ կամիս ի հաւան գալ՝ հինգ կուսանքն բաւական են զքեզ ի հաւան ածել։ Զի՞նչ ի վեր քան զհաւատս, և զի՞նչ կարևոր և պատուական քան զկուսութիւն։ ... և առանց գործոց՝ հաւատովք և կուսութեամբ ոչ կարացին մտանել։

Արդ քանզի երանելի առաքեալն Պաւղոս ասէ, Եթէ գլուխ ամենայն պատուիրանաց Աստուծոյ հաւատք, յոյս, սէր, և գլուխ հաւատոյց և յուսոյ սէր է։ Եւ աւետարանագիր առաքեալն, սիրելին Տեառն՝ Յովհաննէս ասէ. Աստուած սէր է։ Արդ քանզի Հայր ասի սէր, և Որդի՝ հաւատք, և Հոգին սուրբ՝ յոյս։ Եւ արդ զոր աւրինակ սուրբ և անզուգական Երրորդութիւնն մի է, անձինք և անուանք

143 Այս տողում ինձ թւում է պակաս, որ և նշանակում եմ կէտերով CD լերուք 144 ACD խորագէտս 148 C եղերուք E իմաստուք CD ի բարիսն 150 CD ը՛՛ գործովք 151—152 A չիք Արդ եթէ կամիս—ի հաւան ածել: 152 E չիք զքեզ 153 E չիք և (պատուական) 153 Այս տողումն էլ ինձ պակաս է թւում, որ նշանակում եմ կէտերով, Զ.երը պակասի նշան չունին: 157 A չիք ամենայն D է հաւատք 158 C սէր է E և սէր է D հաւատոյն 160 CD հաւատ E և հաւատք որդի 161 ACDE սրբոյ և անզուգական Հմմտ. V սրբոյ և զուգական Երրորդութեանն երեք անձինք են էջ 212:

երեք, նոյն աւրինակ և մարդոյ անձն մի է և տարերք տեղոյ բնութեան հասակին երեք, և անուանք ըստ տեղոյ փոփոխմանն երեք. պատանի, երիտասարդ և ծեր։ Արդ մանկութիւնն անմեղութեամբն և հնազանդութեամբն կոչի հաւատք, և երիտասարդութիւնն զաւրութեամբն և բարեգործութեամբն կոչի յոյս, և ծերութիւնն գիտութեամբն և իմաստութեամբն կոչի սէր. և ապա լինի մարդ կատարեալ։

Արդ զայս երեսին խնդրէ և պահանջէ Աստուած յամենայն մարդոյ. զանմեղութիւն մանկութեանն, և զբարեգործութիւն երիտասարդութեանն, և զգիտութիւն ծերութեանն։ Վասն այսորիկ ասէ, Եթէ ոչ ունիցիք զանմեղութիւն տղայութեանն, որով հաւատացէքն, և զբարեգործութիւն երիտասարդութեանն, վասն որոյ հաստատեցայքն և զիմաստութիւն ծերութեանն, որով կատարեալք լինիցիք, ոչ կարէք մտանել յարքայութիւնն երկնից։ Քանզի, ասէ, Սկիզբն հանճարոյ երկիւղ Տեառն, իմաստութիւն բարի ամենեցուն որ առնեն զնա։

Արդ եթէ կամիցի ոք գիտել՝ գտանէ կնիք մտաց և պահապան անձին զերկիւղն Աստուծոյ, որ պահէ՛ զնա յամենայն մեղաց։ Եւ ապա պահեալ զանմեղութիւն մանկութեանն, և լցեալ զբարեգործութիւն երիտասարդութեանն և հասեալ ի գիտութիւն և յիմաստութիւն ծերութեանն, և հաստատեալ սիրով սրբութեամբ և խաղաղութեամբ, այնուհետև մերժի ի մեղացն, և հեռանայ յերկիւղէն։ Քանզի ասէ եթէ

163 D և տարեք 164 D չիք բնութեան 164—5 A չիք և անուանք ըստ տեղոյ փոփոխմանն երեք 166 D անմեղութեանն և հնազանդութեանն 167 C երիդասարդութիւնն 168 E չիք կոչի յոյս 172 E ա՞մ CD մարդւոյ 173—176 A չիք և զգիտութիւն—երիտասարդութեանն 178 E որովք 179 C արքայութիւն D արքայութին E յերկնից C սկզբն 183 AE մեղաց CD երկիւղն A զերկիւղն 184 ACDE պահեն CD ա՞մ 185 AE մանկութեն 186 A երիտասարդութեն 187 E իմաստութիւն 189 CD երկիւղէն E յերկիւղէն



Սէր զերկիւղ ի բաց մերժէ։ Արդ զո՞ր արդեք մերժէ. զսրբոյ, զբարեգործի, զիմաստնոյ, որ ունի զգիտութիւն ողորմութեան, զխորհրդոյ, զսիրոյ, զսրբութեան և զխաղաղութեան։ .....

Քանզի ասէ, Սկիզբն ուրախութեան եղև ամենայն աշխարհի ծնունդն Տեառն, և գլուխ ամենայն ուրախութեանց աշխարհի յարութիւնն Տեառն։ Արդ քանզի սկիզբն և կատարումն տարւոյն զատիկն կոչի, վասն զի ելք տարւոյն ի շաբաթուն լինին և սկիզբն միւսոյ տարւոյն ի կիրակէին։

Արդ քանզի ի պահոց քառասներորդի կոչի աւր մի ուրբաթ՝ չարչարանք խաչելութեանն Տեառն և աւիթ կոչման չարչարելոցն յաշխարհիս, ունել յանձին զաւրինակ չարչարանացն Տեառն՝ առ ի փրկութիւն հոգւոց չարչարակցացն Տեառն և առ ի պահպանութիւն անձանց պատուիրանապահացն Տեառն. առ ի լինելոյ չարչարակից խաչելութեանն Տեառն, և փառակից յարութեանն, և առիթ կոչման մեղաւորացն յապաշխարութիւն։

190 CDE զերկիւղ CD չիք Արդ զոր արդեւք մերժէ 191 CD զիմաստոյ 192 E և սրբութեն 193 Այստեղ պակաս եմ ենթադրում, յաջորդը չէ կապւում նախորդի հետ: 194 C սկիզն E ուրախութեն 196 E զյարութիւն 197 E զկատարումն CDE տարոյն 198 E քանզի ելք 199 CD ի կիւրակէին 200 Այս տողով սկսւում են T և V. T-ի վերտառութիւնն է «Յովհաննու Մանդակունւոյ Հայոց կաթողիկոսի»։ V-ինը՝ «Յաղագս քառասնորդական պահոց և բաղդատութիւն նորա ընդ զատկական քառասնին»: 200 E և պահոց CD քառասուն երրորդի T քառասնորդսն V քառասնորդ 201 V խաչելութիւնն 202 D կոչմանն կոչման E ի կոչման A յաշխարհի E աշխարհի D ունիլ E անձին 203—4 ACDE չիք առ ի փրկութիւն հոգւոց չարչարակցացն տեառն 204 E և ի պահպանութիւն 206 CD խաչելութեան T չիք և 207 ACDE առ ի կոչումն փոխ. և առիթ կոչման ACDEV մեղաւորաց CD ապաշխարութիւն

Արդ յայսմ քառասներորդի որ կոչի ուրբաթս, աւրէն է զշաբաթն և զկիրակէն իբրև զուրբաթն և զչորեքշաբաթին պահել, զհետ աւրինացն առնելոյ. և յայնմ քառասներորդի որ կոչի կիւրակէ, կոչի աւր առաջին, և սկիզբն աւուրց յարութեան, և ուրախութիւն աշխարհի, և աւետիք արքայութեան, լի ամենայն երանութեամբ անձանց ամենայն պատուիրանապահացն արդարութեան, աւրէն է զուրբաթն և զչորեքշաբաթին իբրև զկիւրակէն և զշաբաթն ուտել։ Զանզի զոր աւրինակ ի զատկէն մինչև ցվերացումն Տեառն կիւրակէ կոչի, այսպէս և ի բարեկենդանէ մինչև ցզատիկն՝ ուրբաթ։

Արդ քեզէն ած զքեզ ի հաւան, և զուգեա զայս քառասուն քաւութեան և զայն քառասուն ուրախութեան. կշռեա զքառասուն ընդ քառասնի, և զուրբաթ և զչորեքշաբաթին ընդ շաբաթուն և ընդ կիւրակէին. և գտանես հաւասարակիկս։ Ոչ ի սմա յագումն և ուրախութիւն, և ոչ ի նմա պահք և տրտմութիւն։ Այս քառասուն առիթ քաւութեան մեղաց տարւոյն, և այն քառասուն յաջորդ ուրախութեան տարւոյն։

209 E քառասնորդի TV չիք որ կոչի ուրբաթս 210 TV որպէս զի աւրէն է EV զկիւրակէն TV որպէս զուրբաթ և զչորեքշաբաթ 211 ACDE առնու TV² առնլոյ V առնելոյ 212 CD այնմ E քառասնորդի TV կիւրակէն 213 E յաւուրց V ուրախութեան 214 E արքայութեանն 215 TV չիք ամենայն 216 E արդարութեանն C օրինէ T զչորեքշաբաթի 217 CD ուտեն 218 CDE ի վերացումն 219 T չիք տեառն 219—220 ACDE չիք այսպէս և — ուրբաթ T չիք և 221 V զքեզ ած T չիք և 222 E քառասունն CDE քառասունն 223 A յուրախութեան E յուրախութեանն CD քառասունի 224 TV զչորեքշաբաթ C շաբաթույն D շաբաթոյն TD շաբաթու 225 TV կիւրակէի TV հաւասարակ CDE հաւասարակիկ T չիք ոչ 226 C ուրախըութիւն V ի նմին 227 TV և տխրութիւնք E քաւութեանն 228 E առաջնորդ ուրախութեանն TV ուրախութեանց



Արդ աւրէն է զայս պահոց քառասնորդս հարթիկ պահել ի բարեկենդանէ մինչև ցզատիկն. քանզի քաւիչ և թողիչ մեղաց տարւոյն կոչի. այլ զգինի և աւղի, ձու, ձուկն, կոգի, պանիր, կաղտի, բածին, չճուկ, կաթն, խէր և ձկան մորէ, զայս ընաւ ամենևին չէ աւրէն ճաշակել ումեք ամենայնի, մեծի և փոքու, արդարոյ և մեղաւորի, շատ են մեզ այլ կամակքն քառասուն աւուրն՝ կտաւհատ, կանեփատ, փոխինդ, սամթաջուր։

Արդ այսու քառասնորդաւ Տէրն ի լերինն փորձութեան տարաւ՝ յետս զփորձիչն սատանայ, որ է աւրինակաբեր յաղթութեան ամենայն հաւատացելոց։ Մի՞թէ Աստուծոյ պահել ինչ պիտոյ էր, ո՞չ ապաքէն վասն աւրինակի մարդկան առնէր զայս։ Արդ եթէ զհանապազաւրն մեռանել չկարեմք ըստ բանին Պաւղոսի, այլ գոնեա քառասուն աւուրքս լինել հաղորդ չարչարանացն Քրիստոսի, զի զբազմանակեալ մեղսն տարւոյն քառասուն աւուրքս ընկեսցուք յանձանց։ Ո՞չ գիտես, զի որ միամտեալ մտաւք չարչարակից լինին չարչարանացն Քրիստոսի՝ նոքա միայն կարեն լինել փառակից յարութեանն Քրիստոսի։ Քանզի ասէ, թէ Ոչ միայն հա-

230 E քառասունս C հարրեք ուղղուած հարքբիկ D յարև պահել 231 TV ի բարեկենդանէն 232 C թողիչ DV ևղ CT ևղի AE ուղի=աւղի V² չիք ձու 233 TV պանիր, կոգի V² կաղտի, բածին 234 TV խեր և ձկանմորէ D մորէ 234—5 TV չէ օրէն և ոչ վայել է ճաշակել ամենայն ումեք 236 Հմմտ. «Ոչ վայել է մեզ ճաշակել, շատ են մեզ այլ կամակքն» Բուզ. (ՀԲ «կամակք»)· բայց Բիւզանդում այս վկայութիւնը չգտայ, երևի առնուած է TV-ից: 237 A աւուր TV կանեփհատ [V կանեփհատն], կտաւատ, փոխինդ, հատ, սամթաջուր: D կտուհատ E սամթաջուր 239 D յետ 241 ACDE ինչ պահել 242 TV առնէր զայն 243 ACDE կարեմք TV ոչ կարեմք 244 V գոնեաց ACDE գոնէ — ACD աւուրքս E աւուրս CD լինել հանապազորդս E լինել հաղորդս 245 V տեառն ջանասցուք փոխ. Քր ACDE V² T զի բազմանկեալ V զ՛ի բազ. անկեալ T լուսանցք. զգաբան TV մեղք 246 ACDE աւուրքք 247 E չիք մտաւք AE լինել 248 E փառակից լինել 249 TVCDE չիք Քրիստոսի CD եթէ

ուտալ ի Քրիստոս, այլ և չարչարել վասն անուան նորա։

Արդ այս քառասունք չարչարանք խաչելութեանն Տեառն, և այն քառասունք յարութիւն կենդանութեան Տեառն։ Այս քառասուն քացախ և լեղի չարչարանաց Տեառն, և այն քառասուն խորխս մեղու և ձկան խորովելոյ յարութեանն Տեառն։ Այս քառասուն զինուորացն պահել զգերեզմանն Տեառն, և այն քառասուն հրեշտակացն տալ զաւետիսն Մարիամանցն զյարութենէն Տեառն։ Այս քառասուն բղխումն արտասուացն Պետրոսի, վասն ուրանալոյն զՏէրն ի չարչարանսն. և այն քառասուն երիցս խոստովանելով Պետրոսի զՏէրն սիրելով։ Այս քառասուն հանապազ մեռանելն Պաւղոսի վասն Տեառն. և այն քառասուն պսակաւորն լինել Պաւղոսի ի Տեառնէ։ Այս քառասուն տրտմութիւն առաքելոցն վասն չարչարանացն Տեառն, և այն քառասուն ուրախութիւն առաքելոցն վասն յարութեանն Տեառն։ Այս քառասուն տրտմութիւն Մարիամայ վասն խաչելութեան Տեառն, և այն քառասուն ուրախութիւն Մարիամայ՝ փառաւք յերկինս երթալոյ վասն յարութեան Տեառն։ Այս քառասուն զաւրացուցիչ բարեգործաց, և այն քառասուն

250 E չարչարել TV այլ և վասն անուան նորա չարչարանս ընդունել արժան է [T չիք արժան է]: 251 D զայս VE խաչելութեան 252 ACDE քառասուն VACDE յարութեան 253 AE Արդ այս CD Արդ զայս V քառասուն TV չարչարանացն CD չարչարանացն չիք տեառն 254 VA քառասունք 255 ACDE չիք յարութեանն V մասն յարութեանն V քառասունք 256 D զգերեզման տն պահել TV ինքով պահել T զգերեզման 257 E տանել զաւետիսն TV զաւետիսն տալ E մարիամայն V զյարութեանն CD զյարութենէ 258 C բղումն 259 C Պօղոսի, D Պօղոսի, sոզամիջում Պետրոսի CD ուրացելոյն 258 — 271 TV չիք Այս քառասուն բղխումն—հասուցիչ վարձուց: 261 AE զտէր 262 E վասն անուանն տեառն 263 CD լինել ECD վասն տեառն 266 A յարութեան 267 E խաչելութեանն 268 D վասն փառօք CD երկինս 2 9 E յարութեանն



հասուցիչ վարձուց։ Այս քառասուն միջնորդ ապաշխարութեան, և այն քառասուն երաշխաւոր թողութեան։ Այս քառասուն քաւիչ յանցանաց, և այն քառասուն թողիչ մեղաց։ Այս քառասուն աղաչաւղ Աստուծոյ, և այն քառասուն հաշտարար խաղաղութեան։ Այս քառասուն ցածուցիչ ցասման և այն քառասուն անցուցիչ բարկութեան։ Այս քառասուն առիթ քաւութեան և այն քառասուն մատակարար ողորմութեան։ Այս քառասուն սգոյ և տրտմութեան, և այն քառասուն սիրոյ և խաղաղութեան։ Այս քառասուն լալոյ և արտասուաց, և այն քառասուն ցնծութեան և ուրախութեան։ Այս քառասուն սերմանելոյ ցաւովք և տրտմութեամբ, և այն քառասուն ժողովելոյ փառաւք և գովութեամբ։ Այս քառասուն առիթ աշխատութեան, և այն քառասուն ցաւղացան աւրհնութեան։ Այս քառասուն գաստիարակ բարեգործութեան, և այն քառասուն պարգևաբաշխ բարութեան։ Այս քառասուն նաւավար չհաւրութեան, և այն քառասուն նաւահանգիստ խաղաղութեան։ Այս քառասուն սատար արդարութեան, և այն քառասուն դռնաբաց արքայութեան։ Այս քառասուն սկիզբն ապաշխարութեան և այն քառասուն կատարած արդարութեան։

271 C մինչնորդ 272 A երաշխաւոր քաւութեան 274—280 TV չիք Այս քառասուն աղաչաւղ—սիրոյ և խաղաղութեան: 277 E քաւութեանն 278 E ողորմութեանն 279 ACD սգոց E սգւոց և տրտմութեանն 280 E չիք և 280—282 ACDE չիք Այս քառասուն լալոյ—ուրախութեան 281 V չիք քառասուն 284—293 TV չիք Այս քառասուն առիթ—կատարած արդարութեան: 285 E աշխատութեանն 286 E օրհնութեանն 287 A պարգեւապաշխ 288 C չահերութեան 288—290 D չիք Այս քառասուն նաւավար—խաղաղութեան: 292 C սկիզբ

Արդ այսու քառասնորդաւ առ մեծ մարգարէն Մովսէս զաւրէնս և եա ժողովրդեանն, և այնու քառասնորդաւ քաւեաց Մովսէս զյանցանսն Ահարոնի և զյանցանս ժողովրդեանն։ Այսու քառասնորդաւ չոգաւ Եղիա մարգարէն ի լեառն Քորեբ առնուլ հրաման ի Տեառնէ զվերանալոյն իւրոյ յերկինս։ Այսու պահաւք ապրեցան երեք մանկունքն ի բարձրաբերձ տօչորական հրոյն սատակմանէ։ Այսու պահաւք լուծեն Նինուէացիքն զվճիռ մահուն զտէրունական հրամանին, և ընկեցին առնելով յանձանց՝ զանց արարին զաւժամայն մահուամբն սատակման մահաբեր մարգարէին։

Տեսանես զերագալուր հաւանութիւնն և զվազկմաց զհնազանդութիւնն Նինուէացւոցն, որոց ոչ միայն մարդիկն ևեթ մեծ և փոքր առհասարակ պահէին, այլ և խաշանց անդամ տային ծոմել, առ ի լինելոյ ընդունելական պահք ապաշխարութեան նոցա, և արագաթող լինելոյ մեղք յանցանաց նոցա։

Արդ քանզի ի կանոնս յայսմ քառասնորդիս, որ կոչի չարչարանք Տեառն, չէք գրեալ մատուցանել պատարագ զչորեքշաբաթի և զուրբաթի, բայց միայն զկիւրակէն.

294 D չիք արդ CDTV այս D էառ TV չիք առ 295 TV չիք զաւրէնս և A «մովսէս» բառն աղճատուած: TV և այն ACDE թէ այսու 296 ACD զանցանսն E զյանցանս TVCD Ահարովնի 297 ACDE զանցանս ACDE թէ այսու T քառասնեբորդաւ 298 CDE Եղիայ TV չիք մարգարէն T ի լեառնն TVCDE սինէական փոխ. Քորեբ 300 E պահեցան փոխ. ապրեցան 301 V բոցոյ տօչորական DE տօչորմանէ TV սատակման 302 C զվճռւ E տէրունական C հրամանին 303 C ընկէցիք ուղղուած ընկէցին C զանձարարին 304 CD առ ժամայն 303—309 TV չիք և ընկեցին առնելով—տային ծոմել 307 CD հնազանդութիւնն Նինուէացւոցն 308 E զմարդիկքն CD մարդիկքն և եթէ մեծ փոքր 310 T ապաշխարութեանն 311 CD արա թող փոխ. արագաթող 311 Այս տողով վերջանում է TV-ում «Յաղագս քառասնապահոց» հատուածը: 312 E քանզի կանոնս AE քառասնորդի 314 E զչորեքշաբթի CD զուրբաթ C զկիւրակէն E զկիւրակէին



քանզի քահանայից եկեղեցւոյ վասն տկարութեանցն արգելեալ է յայսմ քառասնորդիս մատուցանել ի շաբաթուն այգոյն պատարագ և բերան լուծանել։ Եւ վասն զի մի նոցա անարժանք լինիցին առանց պատարագին լուծանել բերան, այլ ասեն, եթէ վասն ծոմականաց մատուցանեմք ի շաբաթու պատարագ։ Արդ որովհետև քահանայք վասն շաբաթահանաց լուծանեն զկանոն պահոց, արդ աւրէն է պահել աւր ըստ աւրէ վասն բանին Պաւղոսի, թէ Ոմն պահէ աւր ըստ աւրէ և ոմն պահէ զաւրհանապազ, և ճաշակել երեկուն, քան եթէ շաբաթս հանել և կամակս ուտել, [և] լուծանել զկանոն պահոց։ Զի եթէ յարձակ աւուրս վանականք բերան լուծանիցեն տարաժամ, ոչ ապաքէն ամաւթալից և զարմեալ լինին ի մարդկանէ, արդ որչափ ևս առաւել ի կարևոր և ի պատուական աւուրս։ Թագաւորք և դատաւորք և նախարարք և եպիսկոպոսք և համայրէն աշխարհականք ի հրամանէ Տեառն և ըստ իւրաքանչիւր կարի պահեն, իսկ զիարդ վայել է վանականին ի կարևոր աւուրս տարաժամ լուծանել և լինել խղճալից մտաւք և ամաւթալից երեսաւք և դայթակղութիւն այնոցիկ, որ ուղիղ կրաւնիւք հանապազ հարթիլն երթայցեն մինչև ի կէտ կատարման սիրով, սրբութեամբ և խաղաղութեամբ։

Արդ ես զայս ասեմ ըստ իմում գիտութեան, թէ

315 C եկեղեցոյ 316 ACE արգեալ D ի շաբաթու 317 E այգւոյն 318 CD անարժան 319 C վասն ծումաչան D վասն ծոմաջան 325 CD զշաբաթս CD ուտելն E ունել փոխ. ուտել ACDE լուծանեն 326 CD զի արձակ 327 C տր ժամ փոխ. տարաժամ 328 E լինին մարդկանէ 329 ACE և պատուական E յաւուրսն 330 CDE զի թագաւորք 331 E յաշխարհական C աշխարհական D աշխարհականք 332 C իւրաքանչիւր 333 E յաւուրսն 334 E լինել 336 C երթայլցեն 337 C սրով D սրով փոխ. սիրով 338 սկսում է V-ն. «Նորին Տեառն Յովհաննու Մանդակունւոյ կանոնք», առնուած Կանոնագրքից—K: K-ից առնում ենք միայն մի երկու ընթերցուած: 338 V զայս ըստ իմում գիտելոյ ասեմ

որ զմանուկ տգէտ և տհաս երեց առնէ, որ ոչ կարէ կարդալ զաւետարան ի բեմի, զպատիժ քահանայութեան նորա նա տայ, որ առնէն զնա. քանզի զհասնոցն և զուսելոցն մեղացն զհամարս անձինք իւրեանց տայցեն։ Այլ աւրէն է զհասուն և զգիտունն, որ կարաւղ է զանձն ապրեցուցանել և ժողովրդեանն առաջնորդել, վասն որոյ մեծին իսկ Պաւղոսի ձայնարձակ բարբառով բողոք բարձեալ աւէր զՏիմոթեայ, թէ Ձեռս ուրուք վերայ փաղվաղակի մի դնիցես և մի լինիցիս կցորդ մեղաց աւտարաց. և դարձեալ եթէ Մի մատաղատունկ, զի մի հպարտացեալ ի դատաստանս և յորոգայթս սատանայի անկանիցի։ Այլ զի Պարտ է, ասէ, քահանային անարատ լինել, որպէս Աստուծոյ տնտեսի, վերակացու լինել հաւատարիմ բանին արդարութեան, զի կարաւղ իցէ մխիթարել ողջամտութեամբ, վարդապետութեամբ և զհակառակորդսն կշտամբել. հեզ, հանդարտ, ցած, պարկեշտ, ուսուցիչ, հիւրասէր, բարեսէր, արդար, սուրբ, ժուժկալ. մի յանդուգն, մի բարկացաւղ, մի թշնամանաւղ, մի հարկանող, մի կռուող, մի երկբան, մի արծաթասէր, մի ծաշաքաղ, մի գինեսէր։

339 KV տգէտ (և) զտխմար չիք երեց առնէ CD էրէց 340 V զաւետարանն C զաւետարան E աւետարան բեմի KV ի բեմի ի լուր ժողովրդոցն, և զբոլոր ուսումն կարգի քահանայութեան ոչ է ուսեալ, զպատիժ քահանայանալոյ նորա նա կրէ՝ որ ձեռնադրեացն զնա. զի 341 CD որ առնեն զնա CD հասնոցն և զյուղրեացն [D զուսուցելոցն] E հասնոցն և յուսացելոցն A զյուսուցելոցն 342 V զհամարս մեղաց 344 CD ժողովրդեան 343—5 V Այլ օրէն է առնել զգիտունն և զհասակաւ կատարեալս արժանացուցանել [K այսմ շնորհի որ կարող են ապրեցուցանել] զանձինս և առաջնորդել ժողովրդեան(ն)։ 345 C Պօղոսին 346 V բարբառովն զբողոք V Տիմոթեայ AE ցՏիմոթեա(յ) CD զՏիմօթեայ 347 V յուրուք V մի դիցես և մի լիցիս 348 D թէ V չիք եթէ 349 CDV ի դատաստան 350 V չիք և յորոգայթս V անկանիցի 351 V չիք ասէ 352—359 V բանին վարդապետութեամբ չիք արդարութեան—մի գինեսէր։ 353 CD զի կարիցէ 354 CD չիք վարդապետութեամբ CDE զհակառակորդն 356 D չիք սուրբ, ժուժկալ, մի յանդուգն 357 CDE մի հարկանող, մի



Արդ զոր աւրինակ զՔրիստոս դնէ միջնորդ Աստուծոյ և մարդկան և հրաշխաւոր և փրկանս ամենայն աշխարհի, արդ ո՞չ ապաքէն նոյն աւրինակ և քահանային աւրէն իցէ ամենայն անարատութեամբ առաջնորդ և փրկանք քաւութեան մեղաց ժողովրդեանն Աստուծոյ լինել։

Արդ եթէ վասն մեծին Մովսէսի ասէ գիրն, եթէ Հեզ և խոնարհ և հանդարտ էր քան զամենայն մարդիկ, և ուսեալ զամենայն իմաստութիւնս Եգիպտացւոց. զի եթէ հեզն և հանդարտն և իմաստունն և անարատն ի բծոյ հաւատարիմ պատգամաւորն Աստուծոյ և մտերիմ տեսուչ ժողովրդեանն չկարաց ամբողջ պահել զժողովուրդն ի մեղաց և ապրեցուցանել զնոսա ի հարուածոցն Տեառն և ժառանգեցուցանել զնոսա ի խոստացեալ երկրի պարգեւականի՝ զհանեալսն յԵգիպտոսէ մեծաւ նշանաւք, իսկ այլ քահանայք տգէտք և տրատաւորք՝ զիա՞րդ կարեն ապրեցուցանել զժողովուրդս ի մեղաց, որք զանձինս իւրեանց անգամ չկարեն պահել ի մեղաց, թող թէ ժողովրդեանն Աստուծոյ լինել միջնորդ և երաշխաւոր տանելոյ յարքայութիւնն Աստուծոյ։

Քանզի գրեալ և պատուիրեալ է. թէ մի յաջ խոտորեսցիս և մի յահեակ. Արդ զշնչական ախտս աջոյ կոչէ և

կռուող 358 E երկբայ 359 C շողոքաղ D ժոշաքաղ CD գինէսէր 360 V Պաւղոս զՔրիստոս 363 V օրէն է 364 V լինել առաջնորդ D փրկան 366 V չիք վասն V գիր 367 D մարդիկք 368 V թէ C եգիպտացոց 369 CD իմաստուն 371 V ոչ կարաց ի մեղաց ողջ պահել զժողովուրդն և C զժողովուրդն Այ. 372 V ա՟յ փոխ. տեառն 373 C ժառանգեցուցանէ 373—4 նոցա զպարգեւական երկիրն չիք զհանեալսն—նշանաւք 374 E նշանեօք 375 V չիք այլ K իսկ արդ՝ այլ 376 V զժողովուրդն 376—7 չիք որք զանձինս—պահել ի մեղաց. 379 V տանել 380 CD մի թէ յաջ V խոտորիցիս 380 Այս տողով սկսւում է V-ի մէջ՝ «Բան խրատու առ ճգնաւորսն» էջ 216։ 381 V-ում վերջանում է կանոնական հատուածը

զմարմնական ախտսն կոչէ յաՀեկէ։ Եւ բազումք իսկ, որ դատարկութեամբ անցուցանեն զաւուրս իւրեանց, երկոքումբք վարին, մեղանչեն և ոչ գիտեն։

Քանզի թշնամին Աստուծոյ և մարդկան այսու ախտիւք յաղթեաց Հողեղինին։ Այսու ախտիւք սպան զերկրաւոր Ադամ, և սովին ախտիւք սպանաւ յերկնաւորէն Ադամայ։ Այսու ախտիւք խաբեաց զնախաստեղծն Ադամ, և սովին ախտիւք խաբեցաւ ի Նորածին Ադամայ։ Այսու ախտիւք եկուլ զշնչաւոր Ադամ, և սովին ախտիւք եթուք արտաքս աստուածեղինաւն Ադամաւ։ Այսու ախտիւք ընկէց զԱդամ ի դրախտէն, և սովին ախտիւք ընկեցաւ ինքն ի խաւարն արտաքին։ Այսու ախտիւք ընկղմեաց զԱդամ ի դրախտէն, և սովին ախտիւք Հեղձաւ ինքն խողիւքն ի ծովուն։ Այսու ախտիւք յաղթեաց կերացողին Ադամայ ի դրախտին, և սովին ախտիւք յաղթե-

այսպէս «և մի յաՀեակ: Վասն որոյ պատուիրեմ առաՋնորդաց եկեղեցւոյ զգուշանալ ի ձեռնադրութենէ տղայոց, և մի կաշառօք արծաթոյ զօք յառաՋ մատուցանել յեպիսկոպոսութիւն կամ յերիցութիւն և կամ ի սարկաւագութիւն, կամ յայլ աստիճան, որպէս ի սուրբ աւետարանին Փրկիչն ասէ առ սուրբ աշակերտսն՝ թէ Ձրի առէք և ձրի տուք»: K-ում սրան Հետևում է նորից երկու կանոն՝ ուղղած աւուր, նաւաստակի, ցուամսի և ամիճների վերաբերեալ (տես Կանոնագիրք), որ կարող են քաղուած լինել Մանդակունու Հարազատ ճառերից: 380 V գրեալ է և պատուիրեալ V խոստոլը 381 E ի շնչական E յաՋոյ V ախտն 382 E ախտն CD յաՀեկէս E որք V ախտն V աՀեկի չիք և 383 EV անցուցին 385 C ախտիւր E աղթիւք 386 E յաղթեալ CD Արդ այսու V Հողեղինին Ադամայ և սովին ախտիւս յաղթեցաւ ի Հողեղինէն Ադամայ, այսու ախտիւս եսպան 387 E չիք Ադամ—յերկնաւորէն V ախտիւս V յերկնաւոր Ադամայն 388 C և սովին ախտիւք և սովին ախտիւք V ախտիւքս V զնախաՀայրն 389 E աղխիւք V ախտիւս V ի Նորածնեալ Ադամայն 390 V զշնչաւորն V ախտիւքս 391 CD աստուածեղինաւ նորն CDEA Ադամայ V չիք արտաքս 392 AD ընկեց 392—4 չիք և սովին ախտիւք ընկեցաւ—ընկղմեաց զԱդամ ի դրախտէն. 393—5 A չիք այսու ախտիւք ընկղմեաց—ի ծովուն 395 V և ինքն V չիք խողիւքն V կերողին AE այսմ E յախտեաց 396 V ախ-



ցաւ ի պաՀացողէն Ադամայ յանապատին։ Այսու ախտիւք խաբեաց զոդէան Ադամ ի դրախտին, և սովին ախտիւք խաբեցաւ ինքն յամենիմաստէն Ադամայ ի յաշտարակին։ Այսու ախտիւք մերժեաց զԱդամ ի դրախտէն, և սովին ախտիւք չոգաւ յետս ինքն ի լերինն փորձութեան։ Արդ փորձիչն մարդկան մինչդեռ կարծէր զստեղծիչն իբրև զստեղծեալն փորձել՝ ինքն փորձեալ գտաւ որդի կորստեան և ժառանգաւոր խաւարի։

Արդ քանզի Հոգւոյս ախտիւք Հոգին չար՝ անկեալ յերկնից և մարմնաւոր ախտիւք եՀան զմարմնաւորն ի դրախտէն, վասն այնորիկ Հայր ամենայն ախտից շնչոյ կոչի Հպարտութիւն և մայր ամենայն ախտից մարմնոյ՝ որկորստութիւն։ Արդ յայսմ երկուց ախտից ծնանին ամենայն ախտք մարդկան՝ շնչականք և մարմնականք։ Արդ այսու ախտիւք կռուի ընդ վանականս յայտնապէս և ընդ աշխարՀականս գաղտնապէս։ Այսու ախտիւք սերմանէ զցայգ քնով և Հնձէ զցերեկ խորՀրդով։ Նիւթէ զցայգ երազաւք և արկանէ զցերեկ լեզուով։

տիւքս յաղթեաց ի պաՀողէն A և նովին ախտիւքն 397 V ախտիւքս 397—402 A չիք «Այսու ախտիւք խաբեաց—ի լերինն փորձութեան», մանր տառով «յետ այլոց»: 398 CDE յաղթեաց զոդէա [D չիք յաղթեաց] 399 V և ինքն յետոյ 399—401 V չիք յամենիմաստէն — յետս ինքն C ամէնիմաստէն D ամէնիմաստն 402 CDE փորձութեանն VE փրկիչն փոխ. փորձիչն 403 V կամէր C զստեղծեալն փորձել 404 V որդին V ժառանգորդ D ժառանգ 406 ACDE չիք չար V քանզի Հոգւով ախտիւք անկաւ Հոգին չար յերկնից 407 D էւՀան V մարմնով ախտիւք զմարմնաւորն եՀան 408 V այսորիկ 409 V և չար շնչոյ կոչի Հպարտութիւնն 410 ACD յայս E այս V յայսմ ախտից 411 C ախտիւք V չիք մարդկան V շնչական և մարմնական 412 V ախտիւքս V չիք յայտնապէս և ընդ աշխարՀականս 413 CD աշխարՀականս E յաշխարՀականս 414 E զցանդ E զցերեկն CD չիք Հնձէ V սերմանեաց զցայգն չիք և Հնձէ—խորՀրդով. 415 E զցանկ E

Արդ այս ախտք են, որ կոչին յանհեկէ.

Որկորստութիւն, անառակութիւն, անկարգութիւն, յադեցութիւն, զմայլեցութիւն, դիրացութիւն, շուայտութիւն, պարարեցութիւն, արբեցութիւն, քնածութիւն։ Վասն այսորիկ ասէ առաքեալ, եթէ Կերակուր պորտոյ և պորտ կերակրոյ, Աստուած խափանեսցէ զնա և զնոսա։

Ցանկութիւն, գիջութիւն, իգասիրութիւն, ակնատեսութիւն, ակնադնացութիւն, պագշոտութիւն, անամաւթութիւն, լրբութիւն, յայրատութիւն, ծիծաղեցութիւն, շնութիւն, պոռնկութիւն, իգացելութիւն, արուագիտութիւն։ Վասն այսցիկ ասէ առաքեալ, եթէ Ամենայն մեղք մարդոյ արտաքոյ մարմնոյն են, բայց որ պոռնկին՝ յիւր մարմինն մեղանչէ։

Վատ, դատարկ, անյարիր, վեհերոտ, դանդաղկոտ, չգործու, չկեցու, դատարկակեաց, դատարկակեր, ընկերակեր, անդութ, երաղատես, երազադէտ, վատ մարգարէ, տգեղծ, տմարդի, անմիտ, անիմաստ, անհանճար։ Վասն այսցիկ պատուիրեաց առաքեալ, եթէ Որ գործէն ոչ՝ կերիցէ մի։

զցուրեկն A ցերեկ CD զցորեկ V զցայգն երազով V զցերեկն 417 CD Արդ այսու ախտիւքն որ V Արդ այսորիկ են որ կոչի անհեկի․ 418 E չիք անկարգութիւն E գիրացութիւնն 418 — 421 V որկորստութիւն, անառակութիւն, շուայտութիւն, արբեցութիւնք, քնածութիւնք, ատախօսութիւն, որովայնամոլութիւն 419 E զմայլութիւն 420 CD պարակեցութիւն 421 CDE առաքեալն 422 V Ած զսա և զնոսա խափանեսցէ: 424 V Վասն պոռնկութեան․ ցանկութիւն, գիճութիւն 425 C պակշոտութիւն 426 V յայրատ տեսութիւն, ծիծաղութիւն, շուայտեցութիւն, շնութիւն 428 EV այսորիկ A չիք ասէ CDEV առաքեալն 429 V թէ V մարմնոյն արտաքոյ մարմնոյն 430 E իւր V պոռնկեցի V մեղանչեցի 431 V վասն դատարկութեան․ վատ 432 ACDE չիք դատարկակեաց 433 EV չիք ընկերակեր V անգութ, անամօթ, քնեայ, երազատես 434 V տգեղծ ի մարմի, անմիտ, անհանճար: 435 EV այսորիկ CDE առաքեալն E գործեն 436 CD ոչ



Ագահութիւն, անյագութիւն, մհատութիւն, ճժդութիւն, հոգածութիւն, ժպրհութիւն, մերդութիւն, ժլատութիւն, անիրաւութիւն, ապիրատութիւն, զըրկութիւն, խաբէութիւն, բռնութիւն, յափշտակութիւն։ Վասն այսոցիկ առաքեալ ասէ. եթէ Արմատ ամենայն չարեաց արծաթսիրութիւնն է և ագահութիւն կռապաշտութիւն։

Երկմտութիւն, նենգութիւն, խորամանկութիւն, խարդախութիւն. չարիմաց, ժանտամիտ, թունաւոր, ուձաքիմ, հրղիմաց, ամենակեղծ, բիւրակեղծ, բիւրաբիծ, ամենաչար, խոժոռամիտ, խոժոռադէմ, տըրտմաւղ, ուրուչիչ, ուռուցկոտ, դեղաւոր, վրիժկոտ, դեզախիճ, գոռոզ, գաղտաառու, չիթող, գաղտախայթ, քինաւոր, վրիժահան, երկխաւս, բանսարկու, հրապուրիչ, ոխակալ, քինապահ, անհաշտեցող։ Այս ախտք են որ կոչին յանհեկէ։

Եւ որ աջոյ կոչին՝ այս է.

Ամբարտաւանութիւն, ամբարհաւաճութիւն մնա-

գործեն ոչ 437 E անյագութիւնն D ճժտութիւն=ժտութիւն ? 437—444 V չիք Ագահութիւն—նենգութիւն․ 438 E չիք մերդութիւն 441 E այսորիկ առաքեալն CD ասէ առաքեալն եթէ ամենայն արմատ չարեաց արծաթսիրութիւն է: 443 «կռապաշտութիւն»-ը մենք ենք կարում նախընթացի հետ, բաժանելով հետևեալից: 444 D խորամանկութիւն V Վասն նենգութեան․ խորամանկութիւն 445 V չարիմաց, ժանտիմաց, ժանտամիտ, թունաւոր 446 E ուձագիմ E հրգիլմաց D «հրիզիմաց», առաջին երկու ընջման կէտով V խարադիմաց ACDE ամենակեղծ, բիւ, բիծմանկատ, ամենաչար 447 E տրտմող E դեղախիճ 448 D վիրեժկոտ V չիք ուրուշիչ 448—454 V ուռուցկոտ, դեզաւոր, դեղամոլ, դեղխիչ, գոռոզ, խայթառու, չիթող, դաշտխօս, բանսարկու, հրապուրիչ, որոշիչ, ոխապահ, քինահան, անհաշտ, ատեցող․ վասն այսորիկ ասէ, թէ այս ախտք են և կոչին անհեկի, և վասն սոցա դատապարտիմք: Եւ այս են աջոյն․ ամբարտաւանութիւն, 449 E չիթող E գաղտախայթ 450 ACE քնաւոր CD հրապուրիչ 452 CD անհեկէ 453 A որք E որ քաջոյ 454 E ամբարտաւանութիւնն, AE անբարհաւաճութիւն(ն)

փառութիւն, անդոսնութիւն, արհամարհողութիւն. չարակամ, խստասիրտ, խստամիտ, խստապարանոց, յամառ, անհաւան, անհնազանդ, խստաբարու, խստաբան, խստախաւս, չարաբան, չարասիրտ, բարկացող, սրտմտող, չարացասումն, արագացասումն :......

Անցին աւուրք խաղաղութեան, հեռացան ժամանակք արդարութեան, բարձան ստուգութիւնք յաշխարհէ, մեկնեցան իրաւունք ի մարդկանէ։ Ոչ գոյ յոյս ի մարդ, և ոչ հաւատարմութիւն առ ընկերի։ Ոչ ոք յուսայ ի ծեր, և ոչ [ոք] հաւատայ վարդապետի։ Չիք

455 AE անկոսնութիւն D արհամհողութիւն EV արհամարհութիւն V նեղութիւն անդոյս փոխ. անդոսնութիւն 456 D համառ 457 C անհաւամ A խեցաբան V խստաբարոյ 458 ACDE չիք չարաբան 459 V չարացասումն, վայրապարացասումն, անժոյժ, եռացկոտ, փքացող, յարձակող, հարկանող, կռուող, արիւներես, տրտմող, մինչ ոչ զփղձուկն և ոչ զփուքն թափել չկարէր յխտակեցուցանել զմիտս իւր: Եւ դարձեալ՝ եթէ ոչ աղաչեսցի յումեքէ՝ ուտել ոչ կարէ և ոչ աղօթել, այլ յաղթեալ ի ցասմանէն՝ անհաշտ անկանի: Վասն այսորիկ բողոքէ մարգարէն և ասէ, «Բարկանայք և մի՛ մեղանչէք». եւ առաքեալ, թէ «Արեգակն ի վերայ բարկութեան ձերոյ մի՛ մտցէ. և մի՛ տայք տեղի սատանայի». և դարձեալ ասէ, թէ «Բարկութիւն մարդոյ զարդարութիւն այ. ոչ գործէ»: Վասն հպարտութեան. հպարտ, անձնիշխան, անզգամ, ապարասան, անհաւան, անհնազանդ, ստահակ, ստամբակ՝ վրիպակ, հեռ, յամառ, վճող, հակառակող, ընդդիմացող, վատախօս, կագող, թշնամանող, խռովիչ, խաղմարար, խանդարիչ, չարաբան, չարարար, չարակամ, չարալուր, չարատես, չարախօս, սուտ, ստապատում, կամակոր, կամապաշտ, կամակատար՝ որ կոչի մոլախոհ, անձնատեաց, անձնակորոյս: Քանզի գրեալ է. «Որ սիրէ զմեղս՝ ատեայ զանձն իւր». և դարձեալ, եթէ հանապազ զած առաջի աչացդ տեսանես՝ ոչ մեղանչես և ոչ գործես զայս ամենայն: Փառասէր, անձնակամ, անձնասէր, անձնահաճոյ, դատարկակեաց. և այս ամենայն չարիք մտեալ բնակէ ի մարդն և մերժէ զայ: Զոր աղաչեմ վասն այ զամենեսեան պահելով զանձինս ի չար ախտէս յայսմանէ. քանզի վասն սոցա բարկանայ ած, որ զայս կրէ յանձինս իւր: 461 E ժամանակ 462 CD յաշխարհէ 463 E հաւատար-



ոք որ կայ ի բանի և առնէ զասացեալն։ Չիք ոք որ ասէ և ոչ ստէ։ Չիք ոք որ խաւսի և ոչ մեղանչէ։ Չիք ոք ստուգաբան, և ոչ ոք գտանի արդարախաւս։ Չիք որ կայ ի ճշմարտութեան և առնէ զարդարութիւն։

Ոչ գտանի բարեգործ խոնարհ, և ոչ մեղաւոր հնազանդ։ Ոչ գտանի արդար սիրուն, և ոչ յանցական երկիւղած։ Չիք ոք որ վասն հոգւոյ հոգայ և ոչ գոյ որ վասն արդարութեան աշխատի։ Չիք ոք որ վասն մեղաց լայ, և ոչ գոյ որ վասն տանջանաց հեծէ։ Չիք ոք սրբասիրտ, և ոչ գոյ արդարամիտ։ Չիք ոք միամիտ, և ոչ գոյ պարզամիտ։

Լուռն ի ծածուկ չիթէ և շատախաւսն յայտ խածանէ։ Լուռն թունաւքն սպանանէ և խաւսողն լեզուով սատակէ։ Ի ներքոյ հուր և արտաքոյ սուր։ Լուռն գաղտ խայթէ և խաւսողն յայտ խոցոտէ։ Երկմիտն դեղովն սպանանէ, և միամիտն սրով խողխողէ։ Ներքոյ մարտք, և արտաքոյ պատերազմ։ Չիք ոք հաւատարիմ, և ոչ գոյ յուսալի։ Ոչ գոյ լուռ միամիտ, և ոչ միամիտ լուռ։

Տէրն փառասէրէ, երիտասարդն հպարտանայ, մանուկն չհնազանդի։ Տէրն կամի առնել և ոչ կարէ, երիտասարդն կարէ առնել և ոչ կամի, մանուկն ոչ կամի և ոչ առնէ։ Չիք ոք որ առնէ զբարի և չէ ոք մինչև ի մի։

Մերձեցան ժամանակք փորձութեան, հասին չարութեան աւուրք, զարթեան պատերազմունք ի չորից

մութիւնն 466 E Չիք ոչ ստուգաբան 467 D ստուգաբան և ոչ գտանի E Չիք ոք որ կայ 468 A առէ 469 CD չիք խոնարհ 471 A երկիւղած E անցական մրկեղ CD երկիւղած և ողորմած 472 A արդարութիւն D արդարութեան յաշխարհի 475 CD չիք և ոչ գոյ պարզամիտ 476 E այտ 477 CD թունաւքն ապականէ 479 E լուռն գայթ 480 CDE դեղով E խողողէ 481 CDE ի ներքոյ մարտ 482 C և ոչ քոյ յոյսալի C միամիամիտ 484 CDE փառասէրէ DE և մանուկն 485 CD և ոչ առնէ CDE երիտասարդն կամի առնել և չկամի 488 E ժամանակ 489 CDE զարդեան

կողմանց։ Յարևելից մահ և յարևմտից սպանումն, ի հիւսիսոյ սուր և ի հարաւոյ հուր։ Բարձաւ աստուածպաշտութիւն ի թագաւորաց և հեռացան խրատք յիշխանաց։ Կորեան ճշմարտութիւնք ի դատաւորաց։ Մոգացան նախարարք աստուածապաշտք։ Մերժեցան սրբութիւնք յեպիսկոպոսաց, հեռացան արդարութիւնք ի քահանայից. քանզի զեպիսկոպոսաց աւրէնս պարտիկք լուծանեն և զերիցանց կանոնս կանայք խրեանց, և զվանականաց կրաւնս երիւարք խրեանց։

Արդ եկն ժամանակ աւերութեան, հատաւ գութ ի մարդկանէ, հատան պատիւք ի ծերոց, դադարեցան մարգիկ յաշխարհէ։ Ցամաքեցաւ սէր, կարճեցան աղաւթք, նուազեցան տուրք։ Չիք ոք որ զքաղցեալս կերակրէ, և ոչ՝ որ զծարաւիս արբուցանէ, և ոչ որ զհիւանդս տեսանէ։ Չիք ոք որ զաւտարս ընդունի և ոչ գոյ որ զբանտարկեալս հանէ։ Բազմացան մեղք յաշխարհի, հեղան աւերութիւնք ի վերայ երկրի, դու ազատեա՛, Տէր, յամենայնէ. և քեզ փառք յաւիտեանս. ամէն։

490 CDE արեւելից մահ և արեւմտից սպանումն ի հիւսիսոյ հուր և ի հարաւոյ սուր. A ի հիւսւսոյ 492 A հեռացաւ 493 E իշխանաց 495 CD եպիսկոպոսաց 496 D քահանայից CDE զօրէնս 497 A չիք ճանոնս 498 D երիվարք E երիվարս 501 E մարդիկք CD աշխարհի 502 CD նուազեցան 503 CD և ոչ զծարաւիս լցուցանէ 505 C զբանտարգեալսն D զբանդարկեալսն 507 C ամենայնէ D յաւիտեանս յաւիտենից: 501—508 E չիք կարճեցան աղաւթք — ամէն. բերի է մնում երեսի վերջում։ 505—508 A չիք բազմացան — ամէն. բերի է մնում երեսի վերջում էջ 677ա։

## Զ.

Զ-ը № 613,50 [=Կարին. 599] Ժողովածու աղօթքների, ճառերի, տեսիլքների, կաշեկազմ, փոքրադիր, 8×12,5, թուղթ, բոլորգիր, զանազան գրիչներից: Գրքի հնագոյն մասը էջ 9ա—190բ մի գրչից, գեղեցիկ և վարժ բոլորգրով, շատ տեղ երկաթագրի հետքերով. ամենայն հաւանականութեամբ ընդօրինակուած երկաթագրից: Տեղն և թուականն անյայտ: Մեզ հետաքրքրող մասն էջ 12ա—23ա:

V=Յովհան Մանդակունու մատենագրութիւնք, երկ. տպագ. Վենետ. 1860, էջ 216—219:

[Զ. էջ 12բ—16բ]

### ԽԱՒՍՔ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆՒՈՅ

Խրատ եւ զովութիւն ճգնաւորաց եւ յանդիմանութիւն ծուլից եւ արհամարհողաց զպատուիրանս Աստուծոյ։

Առն մոնոզոնի ուսելոյ և իմաստնոյ, որ ունի զգիտութիւն ողջողութեան, որոշել զչարն ի բարւոյն, աներկեան պահել զանձն յամենայն իրաց չարաց։ Եւ չարիքն այս են։ Եթէ յանկարծ երբեք ուրեք խաբեցաւ և անառակեցաւ և տարաժամ եկեր և արբ, և կամ եթէ ժամ մի դատարկ անցոյց ի կեանս իւրում, և կամ թէ բան մի դատարկ խաւսեցաւ յաւուրս իւր։ Սակայն վասն այնր պարտի զցայգ լալ և զղջանալ, և առ վաղիւն զգուշանալ մտաց իւրոց, և վարժել զանձն իւր, և նահանջել զցոփութիւն լեզուի իւրոյ, և կացուցանել զմիտս ի հաստատութեան և ի բնութեան իւ-

**2.** 1 Զ. մանդակունոյ 6 Զ. անարկեան 12 Զ. վասն այն Զ. զցայգ

րում, զի մի դարձեալ նովին բծով ծուլասցի և խաբեսցի, և լինիցի սովորութիւն կրթութեան իւրեանց։ Զորս ապա մեծաւ աշխատութեամբ ոչ կարասցէ հանել զարմատացեալ բիծ անձին իւրոյ, այլ անցեալ ըստ այս երիս մեղանս առն մոնոզոնի՝ աւելի քան զայս եթէ մեղանչէ՝ նա իբրև [զիս] անխմաստ և բազմամեղ է և ամենաթշուառ։

Զի մերժեցաք յայսմանէ և հեռացաք յայնմանէ. Թողաք զայս և չառաք զայն. Ելաք յայսմանէ և չհասաք այնմ։

Արդ՝ մոնոզոն, որ հացիւ և ջրով յագի, և քնով զմայլի և զանձն առ մոնոզոն ունի, նա որպէս զիս անմիտ է և հպարտ, վասն զի ոչ կարէ գիտել զբիծ անձին իւրոյ։ Քանզի ի գործ և ի գիտութիւն կոչեցաւ մարդ, իմանալ զլաւն և առնել զբարին, որոշել զչարն ի բարւոյն։

Արդ՝ կրաւնաւոր, որ ճաշէ և ննջէ, քան զայն անառակութիւն ինչ ոչ կայ, քանզի Լիութիւն կենաց զփառասիրութիւն և զպոռնկութիւն ուսուցանէ, և կարաւտութիւն կենաց զխոնարհութիւն կարապետէ։ Մի կշռեր զքեզ առանց մեղաց, վասն զի ասէ՝ Սուտ են որդիք մարդկան և ի կշիռս իւրեանց մեղանչեն։ Ծանիր և տես նախ զքեզ, եթէ որո՞ց ախտից յաղթեցեր և մերժեցեր ի քէն, և ապա ունիս համարձակութիւն առ Աստուած։

Զի՞ համարձակիս, քանզի չես մտեալ ի լուծ կրաւնաւորական կարգաց։ Զի՞ փառասիրես, քանզի չես անցեալ ընդ նեղ և ընդ նուրբ ճանապարհն, որ տանի ի կեանս։ Զի՞ բարձրամտես, քանզի չես անցեալ յապարխափ տուրևաւիկ մրցանակի փորձութեան։ Զի՞ մեծամտես, զի չկարացեր հրաժարել յաշխարհէ և առնել զլոյն քո յանապատի և լինել աղաւնի անապատա-

17 Զ. իւրանց—իւրեանց ? 23 Զ. հեռեցաք 27 Զ. մոնոզն 31 Զ. ՛ի բարոյն 33 Զ. կա 35 Զ. եթէ որոց 142 Զ. կարգեց



սէր։ Որ երիվարաց թեւաւքդ կոչնոյ ի կոչումս ազատացեալ շրջիս, իբրև զանստացուածսն անապատական լեռնէ ի լեռն թռչիս։ Զի՞ հպարտանաս թանակեր բերանովդ իբրև զհանապազորդ զճարակաւորսն, ուք ի լերինս անցուցանեն զաւուրս իւրեանց խոտաբոյծ ոտնկաւք։ Բաջաց յատակ են միտք ջրարբուաց և առողջ մարմինք խոտակերաց։

Զի՞ պարծիս, որ հանապազ յագեալդ ես հացիւ և ջրով և զմայլեալ քնով և դատարկութեամբ, քանզի ասէ, թէ Զգործող ձեռաց՝ անկեր բերան։ Զի՞ խրոխտիս, քանզի դատարկակեացք չունին համարձակութիւն առ Աստուած։

Դատարկութիւն առիթ անկման ի ձեռն ախտից, չլինելոյ ընդունելական ապաւթից նորա։ Աղաւթք դատարկաց՝ դատախազ անձանց, և աղաւթք մշակաց՝ բարեխաւս աշխարհի, և քրտունք աշխատողաց՝ բժիշկ անձանց և աղաւթք նոցա հաճոյ Աստուծոյ։ Որպէս ասէ՝ Զվաստակս ձեռաց քոց կերիցես, երանի է քեզ և բարի եղիցի քեզ։

Զի՞ փառասիրես, որ չև ևս ես հաստատեալ զմիտս քո սիրով, սրբութեամբ և խոնարհութեամբ։ Մի խաբիր ի մտաց քոց, զի չես հասեալ ի կէտ կատարեալ ջանիւ և աշխատութեամբ։ Զի՞նչ ունիս զոր ոչ աշխատեցար, և եթէ աշխատեցար՝ զի՞ պարծիս իբրև զչաշխատեալ։

Զիք ոք որ կարդայ և ի միտ առնու, և ոչ դոյ, որ ուսանի և առնէ։ Զիք ոք հոգևոր, և ոչ գտանի անապատասէր։

Հրաժարեցաք յաշխարհէ և չհրաժարեցաք ի ստացուածոց։ Հրաժարեցաք ի ծնողաց և չհրաժարեցաք ի ծանաւթից։ Հրաժարեցաք ի կենաց, և չհրաժարեալք ի տանտիկնաց։ Հրաժարեալք ի տանց, և չհրաժարեալք

57 Զ. Զի խոտաիս—խրոխտաիս 73 Զ. կարդա 79 Զ. ի տանդկնաց Զ. չհրաւարեալք

ի դրաց։ Հրաժարեալք յանապատաց, և չհրաժարեալք յիշխանաց։ Հրաժարեալք ի հարկաց, և չհրաժարեալք ի բանակաց։ Հրաժարեալք ի հողոց և չհրաժարեալք ի խորհրդոց։ Հրաժարեալք ի կենաց և չհրաժարեալք ի մեղաց։ Հրաժարեալք ի լերանց, և չհրաժարեալք ի հրապարակաց։ Հրաժարեալք ի ճարտկաց, և չհրաժարեալք ի բազմականաց։ Հրաժարեալք ի պահոց, և չհրաժարեալք ի կոչնոց։

Ի հանդիսի վաստոց բազումք անցանեն և ի հանդիսի կրաւնաւորաց սակաւք։ Յասպարիսի [...] բազումք անցանեն և յասպարիսի վարուց սակաւք։ Զգիւտ բանից բազումք ունին, և զգիւտ մտաց սակաւք։ Զգիւտ մարմնոյ բազումք ունին և զգիւտ հոգւոյ սակաւք, ըստ բանին տեառն, եթէ Բազումք են կոչեցեալք և սակաւք են ընտրեալք։

Հողմ սաստիկ ոչ կարէ շարժել զծառ հաստատուն, և ախտ ձանձրութեան զմիտս հաստատունս։ Մինչ ձանձրկոտ իբրև զծուխ ալիս յածեալ ծփին, և աչք նորա զտեսաւս խնդրեն։ Ախտ ձանձրութեան կերիչ է սրտի, դերիչ է մտաց։ Ցաւ խորհրդոց արգելիչ է կամաց, խափանիչ է յաւժարութեան։ Խստագոյն [է] ցաւումն քան զցաւս մարմնոյ։

Արդ՝ այսու գիտասցիր զառողջութիւն առն վանականի, յորժամ զտեղի ունիցի և բնաւ ամենեւին չանցուցանիցէ ժամ մի դատարկ, այլ սաղմոսէ, աղաւթէ, կարդայ, գրէ, ուսանի, ուսուցանէ, կարէ, կարկատէ, արբանեկէ, և լինի իբրև զծառ հաստատուն ի միում վայրի, և տայ զպտուղ իւր ի ժամու անթափ տերևով։

Արդ՝ երանեմ լեռնակեցացն հանապազորդաց, որք հրաժարեալ են յաշխարհէս, հեռացեալ ի ստացուածոց, արձակեալ ի կանանց, ազատեալ ի տանտիկնաց, զատեալք յիշխանաց, մեկնեալք ի հարկաց, աւտարացեալ ի բանակաց, արտաքսեալք ի տերանց, որոշեալք ի հողոց, քեցեալ ի խորհրդոց, մաքրեալ ի չարին սերմնացանութենէ, սրբեալ ի մեղաց և լեալ անստացուած, ունելով զմիտս իւր[եանց] ....

(Թուղթ ընկած, մնում է թերի)։

91 Զ. զգուտ 92 Զ. զգուտ հոգոյ 98 Զ. խնդրեն 99 Զ. ցաւք 102 Զ. վանական 103 Զ. զմի տեղի, «մի»ն ջնջման կետով։ 105 Զ. կարդա 107 Զ. տա 108 Զ. հանապազորդոց



113 Զ. ուրոշեալք 114 Զ. սերմամնացութենէ [=սերմնամնացութիւն կամ սերմնացանութիւն]։ 73—114։ Այս ճառի մասն է՝ ուրիշ խմբագրութեամբ և նոր հատուածներով V ի մէջ հետևեալը․

«Վասն վարդապետաց։ Ոչ գտանի վարդապետ խոնարհ և ոչ աշակերտ հնազանդ․ ուսեալն հպարտանայ և ագէտն խստանայ․ չիք ոք որ խրատեամբ վարի, և ոչ ոք որ աղքատութեամբ կայ․ գիտունն սնափառի և ագէտն փառասիրի․ գիտունն չխոնարհի և ագէտն չհնազանդի․ ծերն սաստելով հրամայէ և փոքրն սաստկութեամբ պատասխանէ․ ծերն զպատիւ խնդրէ և փոքրն զհանգիստ․ չիք ոք որ իմանայ և չիք ոք որ ուսանի և առնէ․ չիք ոք որ ողբեալ է և չիք ոք որ անապաշաւ է․ հրաժարեալք յաշխարհէ և չհրաժարեալք ի ստացուածոց․ հրաժարեալք ի ծնողաց և չհրաժարեալք ի ծանօթից․ հրաժարեալք ի հողոց և չհրաժարեալք ի խորհրդոց․ հրաժարեալք ի հողոց և չհրաժարեալք ի մեղաց․ հրաժարեալք ի լերինս և չհրաժարեալք ի հրապարակաց․ հրաժարեալք ի պահս և չհրաժարեալք յըմպողաց։ Եւ արդ բազումք են կոչեցեալք և սակաւք են ընտրեալք։

Արդ զոր օրինակ եկեղեցին կոչեցաւ քահանային, և չէ օրէն նմա այլ կին ունել՝ բայց ի մինջէն․ զի եթէ աշխարհականին չհրամայէ երկու կանայս ունել՝ այլ մի, ի նա յարել, զնա սիրել, նովաւ կեալ, զի այս է հրաման տեառն․ և դարձեալ հոգին ամուսին կոչի, և եկեղեցին ամուսին կոչէ, արդ նոյն օրինակաւ և վանականին վանքն կոչի, զվանքն եկեղեցւոյն է ծնեալ․ քանզի ասէ առաքեալ, թէ գլուխ կնոջ՝ այր է, և փառքն կնոջ՝ այրն, և օրէնք կնոջ՝ այրն։ Արդ յորժամ վանաց երէցն գլուխ և փառք և օրէնք վանացն լիցէ, ի տեղւոջն կացցէ և տեսցէ զժողովուրդ իւր․ զի թէ դու որ առաջնորդ ես՝ ոչ կաս ի կայի, այլոց զիարդ կարես ասել՝ թէ կաց ի կայի, երկիր ի տեառնէ և հնազանդէ առաւելոյ վարդապետաց։ Արդ որք զիւրեանց անձանց զպտուղն չկարեն հաւատեաւ պահանջել, զիւրեանց անձինս արձակ համարձակս արածեն, զայլոց անձինս նշաւակք հաշեն և մաշեն․ ինքեանք երկրպագու սատանայի զհետ տերանց և տիկնաց յածեալ ծփին, և ի կրօնաւորաց և ի վանականաց իբրև յանարգաց զարշին և խորշին․ չկարէ ոք երկուց տերանց ծառայել։»

## 3-

[Էջ 17ա—23ա]

### Նորին ի նոյն զրոց.

Արդ՝ են վանականք, որ գիտեն զխորհուրդս մտաց իւրեանց և գիտութեամբ որոշողութեամբն և հանապազ հարթիկ վաստակաւքն յաղթեն նոցա. աստ փառաւորին և անդ պսակին։ Եւ են վաստակաւորք, որ ադիտութեամբ և անորոշողութեամբ խորհրդաւք վարին, խառն ի խուռն վաստակին, երբեմն թուլանան և երբեմն պնդին, աստ տանջին և անդ։ Են վաստակաւորք, որ կեղծաւորութեամբ, փառասիրութեամբ, հըպարտութեամբ և խիստ վարուք ասորերէն հարկանեն զմարմինս իւրեանց. աստէն ի վաստակոցն տանջին և անդ ի տէրունական պատուհասէն։

Են մոնոզոնք, որ ի սկզբանն յաղթեն ախտից իւրանց և ի վախճանին յաղթին, առնուն և ոչինչ։ Եւ են, որ ի սկզբանն յաղթին և ի վախճանին յաղթեն և առնուն ընդ միջինսն։ Եւ են, որ ի սկզբանն յաղթեն և ի վախճանին, և առնուն ընդ առաջինսն։ Մոնոզոն յորժամ յաղթէ խորհրդոց իւրոց և հալածէ զբիծ յանձնէ իւրմէ, յայնժամ լինի ծանաւթ տեառն, և առնու շնորհս ի տեառնէ, և ունի համարձակութիւն մատուցանել զպաղատս իւր տեառն։

Արդ՝ որ հարթիկն վարին՝ նոքա ի սկզբանն յաղթեն և ի վախճանին զոգիսն շինեն և զմարմինն առողջ պահեն։ Իսկ որք երբեմն պնդին և երբեմն թուլանան ի սկզբանն յաղթեն և ի վախճանին յաղթին. նոքա

3. 3 Զ. աւրոշողութեամբն 4 Զ. զհարթիկ 10 Զ. նախապէս այսորերէն յետոյ յ-ն ջնջուած=ասորերէն 22 Զ. հարկ տողամիջում լն—հարկլն, որ ուղղում ենք հարթիկն



զմարմինն հաշեն և զոգին կորուսանեն։

Արդ՝ ոչ խիստ վարուք հաշել զմարմինն և հպարտացուցանել զմիտսն և զաւրացուցանել զախտս շնչոյն փառասիրութեան, և [ոչ] թոյլ վարուք լցուցանել և պարարել զախտս մարմնոյն և կուրացուցանել զլուսաւորութիւն գիտութեան շնչոյն։ Քանզի Մարմին լցեալ՝ զմիտս սուրբս ոչ կարէ ծնանել։

Արդ՝ հարթիկն վարել այս է. ոչ չաքաթ հանել և ոչ հասարակել, այլ զամենայն աւր յիւն ժամուն՝ և զայն՝ սակաւ ուտել և սակաւ ըմպել։ Սակաւ ի քուն լինել, սակաւ խաւսել, սակաւ շրջել։ Քանզի յաւելորդաց անտի լինի մուտ չարին, որով կարէ թշնամին մուտ գտանել ի միտս մարդկան և խաբել զնա թոյլ և խիստ վարուք։ Քանզի կչռութիւն վարուց չունի խաբումն մտաց։ Քանզի ուղղութիւն վարուցն ունի զսըրբութիւն հոգւոյն և կչռութիւն կենացն բերէ զառողջութիւն մարմնոյն։

Արդ՝ զոր աւրինակ առնիցէ ոք ճաշ առն պատուականի և առնիցէ զխորտիկսն աղի կամ անլի, կամ հում կամ կարի եփեալս, և ոչ ունի զկչռութիւն անուշութեան, ոչ ապաքէն անարգեցաւ ճաշն և ճաշատէրն առ ի չլինելոյ անոյշ խորտկացն։ Նոյնպէս և կրաւնաւորութիւն, եթէ ոչ տանի զվարսն ուղիղ ի կէտ կատարմանն, անհնար է նմա առնուլ զհաստատութիւն մտացն և պահել սրբութեամբ և լինել խաղաղութիւն հոգւոյն և առողջութիւն մարմնոյն։

Արդ՝ զայս հայցեա ի տեառնէ, եթէ Մի տար ինձ վարս խիստ[ս], զի մի հպարտացայց, և մի տար ինձ վարս թոյլս, զի մի մեղայց. այլ տուր ինձ վարս միջինս, որով կարացից մտանել ի կշիռս արդարութեան, բառնալ զլծակն կչռորդացն ստուգութեամբ և առանց

29 Զ. լցուցանէ 30 Զ. պարարէ Զ. կուրացուցանէ 33 Զ. նախապէս հարկ, յետոյ կենր ջնջուած եւ նոյն գրչով ուղղուած հարթիկն Զ. վարեալ 41 Զ. հոգւոյն 48 Զ ուղեղ ջնջուածներով. 51 Զ. հոգւոյն

*

յաջ և յաճեալ սայթաքելոյ երթալ ընդ պաւղաւտայ պատուիրանացն տեառն և ամբողջ մտաւք հաւանել ի կէտ կատարմանն սիրով, սրբութեամբ և խաղաղութեամբ։

Քանզի յառաքինութենէն ծնանին ախտք շնչոյն և ի վատթարէն ծնանին ախտք մարմնոյն։

Արդ՝ որչափ մարդ շնորհաւք Աստուծոյ փարէ զանձն, եթէ ի հոգևորական և թէ ի մարմնաւորական, նոյնքան և փառասիրութեան ախտքն շնչոյ [աճ]են։ Յառաքինութենէ անտի ծնանի և ընդ առաքինութիւն պատի, որպէս զգաղձ զծառով, ընդ նմին աճէ և ընդ նմին զաւրանայ և ընդ նմին զիջանէ, Վասն զի ի մանկութեան՝ մարմնոյ ախտքն կռուին ընդ մարդոյն և յաւագութեան՝ ախտքն շնչոյն փարեն զմարդն։ Որքան նա կասեցաւ յառաքինութենէն, նոյնքան կասեա և դու զփառասիրութիւն։

Արդ՝ լաւ է քաջանալ մարդոյն և ընդ միում կողմանն կռուել, քան թէ վատանալ և ի յերկուց կողմանցն տանջել։

Բայց վարք վանականացն կրաւնաւորաց և արդարոց այս են։ Նախ հրաժարել յաշխարհէն և յընչից աշխարհիս, ի հաւրէ, ի մաւրէ, ի կնոջէ, յորդւոց, յեղբարց, ի քերց, յազգէ, ի տոհմէ, ի սիրելեաց, ի բարեկամաց, ի ծանօթից, ի գեղջէ։ Եւ շինել վանս յանապատի, ուր ջեր և ջուր և փայտ շատ։ Եւ տանել գրաստս երկուս, արբանեակս վանացն։ Եւ արուեստ ունել և ուտել զվաստակս ձեռաց իւրեանց, և չառնուլ զուրուք ձրի, և հատուցանել իւրաքանչիւր ումեք զպարտս և զպատիւս և զերախտիս հոգևորականս, բանիւք և արդեամբք, հեռաւորաց և մերձաւորաց։

57 Զ. պաւղատա տողամիջում ւ=պաւղաւտա—պողոտայ: 69 Զ. աւագութեան 77 Զ. յաշխարհէս Զ. ընչից, բրբ քերուած. 78 Զ. յորդոր 82 Զ. արուեստակել=արուեստ ունել ? կ=ն։



Եւ բնաւ ամենևին չգտանել ումեք պարտական, արդարոց և մեղաւորաց։ Եւ անխափան վարել զկրաւնաւորութիւն և զկանոն վանականացն, զտուընջեան և զգիշերոյ։ Եւ տանել զվաստակս իւրեանց ի կէտ կատարմանն խաղաղութեամբ և առանց մեղացն. անբիծ, անարատ ընթանալ ի կեանս անմահս, զոր պատրաստեալ է այնոցիկ, որ խաղաղութեամբ արժանի լիցին ժառանգել զնա։

Նոյն աւրինակ և աշակերտացն լինել հնազանդ վարդապետին և միմեանց, և հաստատուն մտաւք կեալ և մեռանել ի միում վանս և առ միում վարդապետի, և ամենայն իրաւք կատարել զաստիճան աշակերտութեան իւրեանց։ Եւ չառնել իրս ինչ առանց կամաց աւագին և եղբարցն. և առնուլ զաւրհնութիւն ի վարդապետէն։ Եւ ապա յետ վախճանելոյ առաջնորդին իւրոյ, յիւրում ժամու և յիւրում կարգի լինել նմա վարդապետ և առաջնորդ եղբարցն։ Եւ զոր աւրինակ նա յայլոց աւրհնեցաւ, նոյն աւրինակ և այլքն նմա հնազանդին և աւրհնին ի նմանէ։ Եւ նա այնուհետև կատարեալ վարուք և լի աւրհնութեամբ յառաջնոցն և ի վերջնոցն, երթայ ի հանդիստն իւր խաղաղութեամբ, սիրով ի կեանս բնականս։

Արդ՝ կացցեն այլ հիւրք սուրբք և պատուականք քան զհիւրսն Աբրահամու երանելոյ. և կամ հիւրամեծար լաւ և աւտարընկալ բարի քան զԱբրահամ արդար, որ թէպէտ և յայլ աւուրս իբրև զաշխարհավար ըստ աւրինաց աշխարհի ի հասարակ աւուր ճաշէր, սակայն այնաւր առանց ճաշելոյ եկաց մնաց մինչև յերեկոյն։

Արդ՝ ասէ, ասա ինձ զլաւն, այն ինչ արդեաւք լաւագոյն պատիւ էր հիւրոցն, եթէ ճաշակեալ էր ընդ նոսա, եթէ այն, զի առանց ճաշակելոյ երկիւղածու-

87 Զ. ամէնեւին 88 Զ. վարեալ 93 Զ. արժան 102 Զ. յորում կարգի 107 Զ. երթա 109 Զ. հուրք 111 Զ. աւտարընգալ Զ. պատուէր=պատիւ էր տես տող 137։ 117 Զ. ճաշակել էր

թեամբ եկաց ի սպասաւորութիւն նոցա։ Տէնա, և հիւրքն չստիպեցին զնա ճաշակել ընդ իւրեանս։ Ընդէր արդեաւք.— առ ի լինելոյ ճաշ նոցա կարգ աւրինակի հիւրոց և ասպնջականաց ամենայն հաւատացելոց։ Քանզի տեսին հաւատով հաստատեալ զսիրտ նորա, և յուսով գործէր զգործն Աստուծոյ։

Արդ՝ գտանիցե՞ն արդեւք ի յերկրի այլ վանականք խոնարհք, գիտունք և կրաւնաւորք հիւրամեծարք և աւտարընկալք իբրև զվանականսն Երուսաղէմացւոց, զեգիպտացւոցն, զհոռոմոցն, որք ոչ կանոն զկրաւնաւորական վանականացն լուծանեն, և ոչ զհիւրասիրութիւնն աւտարընկալութեան խափանեն։ Քանզի որչափ և աշխարհս չէն կայ, հիւր ի վանաց ոչ պակասէ։

Արդ՝ որչափ հիւրքն ի վանսն գան և վանականքն տարաժամ ճաշակեն, նոքա երբեք ոչ վարեն զկարգ վանականաց, քանզի ոչ պակասէ հիւր ի վանաց։

Արդ՝ զտարաժամ ճաշակելն վասն հիւրոցն՝ համարին առնել զկամս Աստուծոյ, այլ ոչ այդպէս։ Քանզի հիւրոց պատիւ այս է. յորժամ գայ՝ ճաշեսցէ, և յորժամ գնայ ճաշեսցէ, և եթէ միայ ժամու՝ ընդ եղբարս ուտիցէ կրաւնիւք։ Եւ ոչ այն՝ եթէ տարաժամութեամբ անառակութեամբն նա մեծարեսցի, այլ՝ պիտոյիւք և կարգաւք ըստ կամացն Աստուծոյ։ Քանզի շրջօղք և անառակք ոչ ինքեանք կան ի կարգի և ոչ այլոց տան վարել զկանոն կրաւնաւորութեան վանականաց։

Արդ՝ առաքինութիւն մարդոյ այս է, յորժամ զերկոսին աչսն լուսաւոր պահէ։ Իսկ եթէ զմինն շիջուցանիցէ և զմիւսն ունիցի, զի՞նչ աւգուտ իցէ։ Տուք, ասէ, զկայսերն կայսեր և զԱստուծոյ[ն] Աստուծոյ։ Ապաքէն Ըստ աւետեացն և աւետչայն։

Արդ՝ եթէ կամեսցի ոք իրս ինչ հոգևորական առ-

127 Զ. աւտարընդալք Զ. եմացւոց 129 Զ. զհիւրսիրութիւնն 131 Զ. կա 137 Զ. պատու Զ. գա 138 Զ. մնա 148 Զ. աւետչացն=աւետչայն=աւետչեայն:



նել, պարտ է նմա նախ զիրսն քննել, եթէ իցեն հաճոյ Աստուծոյ եթէ ոչ։ Ապա եթէ չիցեն հաճոյ Աստուծոյ իրքն, աւրէն է նմա թողուլ զիրսն և ոչ երթալ ընդդէմ կամացն Աստուծոյ։ Զի յիրս, յորում սէր և սրբութիւն և խաղաղութիւն ոչ է, այն իրքն Աստուծոյ հաճոյ ոչ են։

Արդ այսու գիտեա զիրսն զոր կամիս առնել, եթէ իցեն հաճոյ՝ նախ քան [...] առողջութիւն շնորհեն և զիրսն առաջի քո յաջողէ։

Ապա եթէ դժուարաւ, աղաղակաւ և խռովութեամբ լինի, գիտասցես զի ոչ են կամք Աստուծոյ. այլ հրասատակեա զսատանայ երեք նետաւքս այսոքիւք՝ սիրով և սրբութեամբ և խաղաղութեամբ. և դու կաց մնա ի սէրն Քրիստոսի, զի այն է բարին, հաճոյն և կատարեալն առաջի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում փառք այժմ և յաւիտեանս, ամէն։

155 Զ. ոչ է 156 Զ. Ար 157 բուն է պակաս. 161 Զ. այսպես հրասատակեա Զ. այսոքիկ

3458

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0223784